ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

☎ 091 700 667

30.09.2019թ

Ե/127-19

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի թիվ 72, 73,74 որոշումները:

Առդիր՝ 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռումարզ, գ. Սարահարթ
☎ 091 700 667

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 72

30 սեպտեմբերի 2019թ

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, <<Հողային օրենսգրքի>> 5-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն և 11.08.2005թ-ի թիվ 1613-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ տվյալ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Սարահարթ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ կառավարության 11.08.2005թ-ի թիվ 1613-Ն որոշման 6-րդ հավելվածով ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքին փոխանցված կադաստրային քարտեզի 06-097- 0127-0001 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության (արոտավայր) հողերից առանձնացված 0.10695հա հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-097-0127-0001 ծածկագով գյուղատնտեսական նպատակային նշանակության (արոտավայր) հողերից առանձնացնել 0.10695 հա հողամաս և համարել որպես առանձին միավոր:
3. Դիմել ՀՀ կառավարության առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռումարզ, գ. Սարահարթ
☎ 091 700 667

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 73

30 սեպտեմբերի 2019թ

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, <<Հողային օրենսգրքի>> 5-րդ հոդվածի 5-րդ կետով ,<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն և 11.08.2005թ-ի թիվ 1613-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ տվյալ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Սարահարթ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ կառավարության 11.08.2005թ-ի թիվ 1613-Ն որոշման 6-րդ հավելվածով ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքին փոխանցված կադաստրային քարտեզի 06-097- 0124-0001 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հողերից առանձնացված 0.24936 հա հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-097-0124-0001 ծածկագով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հողերից առանձնացնել 0.24936 հա հողամաս և համարել որպես առանձին միավոր:
3. Դիմել ՀՀ կառավարության առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

07.10.2019

ՈՐՈՇՈՒՄ 74

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների 10.06.2008թ. 27.04.2010թ ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 1004 որոշմամբ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ թիվ912-ն որոշման 9-րդ կետի,ՀՀ 510-ն օրենքի պահանջներով <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 27.03.1993թ թիվ 1 որոշումը,հողի սահմանների ճշտության վերաբերյալ Տ. Վարդանյանի կողմից կազմված հատակագիծը և հարգելով Գագիկ Քարամյանի և մյուսների դիմում խնդրանքը այն մասին,որ Սարահարթ համայնքում 06-097-0022-0015 ծածկագրի տակ գտնվող 0.12հա սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա 1990թ կառուցել են 60.01քմ մակերեսով բնակելի տունը (ժառանգության վկայագրում նշված վագոն տնակը (փաստացի մի քանի տնակներն են)նույնն է ինչ որ հատակագծում նշված բնակելի տունը),7.9քմ մակերեսով բնակելի տան նկուղ, 30.33քմ մառան:

Նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խաղտում այլ անձանց իրավունքները, և օրենքով պահանջող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խաղտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օրենքի ուժով վերականգնել և ճանաճել Վարազդատ Գալուստի Քարամյանի սեփականության իրավունքը՝ Սարահարթ համայնքում 0022-0015 ծածկագրի տակ գտնվող 0.12 հա տնամերձ հողամասի և նրա վրա 1990թ կառուցված 60.01քմ մակերեսով բնակելի տան, 7.9քմ մակերեսով բնակելի տան նկուղի, 30.33քմ մառանի նկատմամբ:Նշված գույքի միակ սեփականատերը հանդիսանում է Վարազդատ Գալուստի Քարամյանը:

2.Օրենքի ուժով ճանաչել որպես ինքնակամ կառույց նույն հողամասի վրա 2016թ կառուցված 41.17քմ անասնագոմի նկատմամբ:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2019թ մայիսի 13-ի թիվ 48 որոշումը :

4.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան